

ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վ. Գրիգորյանի այցելությունը Կապանում
կայացած Սյունիքի փրկարարների վարժանքին
08.07.2014

ՀՀ ԱԻ նախարարության և Շվեյցարիայի միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ իրականացվող «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում ստեղծված Սյունիքի մարզի որոնողափրկարարական թիմի 47 անդամների մասնակցությամբ Կապանի օդանավակայանի տարածքում անցկացվեցին Սյունիքի որոնողափրկարարական թիմի INSARAG-ի չափանիշներին համապատասխան ներքին որակավորման ուսումնական վարժանք, որին հետևել է նաև Սյունիքի մարզպետի տեղակալ Վաչե Գրիգորյանը: Վարժանքի ողջ ընթացքում, որը ղեկավարել է ՀՀ ԱԻՆ ՓԾ ԲՊԱՀՎԿ վարչության պետ, փ/ծ գնդապետ Յ.Եմիշյանը, թիմի փրկարարներն իրականացրել են ուսումնական որոնողափրկարարական աշխատանքներ՝ իրենց տրամադրված INSARAG-ի որակավորում ստանալու համար անհրաժեշտ գույքով, որոնց օգտագործման համար անցկացվել են համապատասխան դասընթացներ: Կապանում անցկացվող ուսումնավարժանքի համար Վ. Գրիգորյանն իր շնորհակալությունն է հայտնել կազմակերպիչներին՝ մարզի փրկարարական ծառայությունն հատկապես փրկարարական աշխատանքների համար նախատեսված ժամանակակից սարքավորումներով ապահովելու համար: